ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2018թ. թիվ 437-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 332-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 02/1983-2018 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հանել ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 332-Ա որոշմամբ հաստատված հավելվածի «Անձնակազմի կառավարման բաժին» մասի 2-րդ տողը, իսկ «Ընդամենը» տողում «4» թիվը փոխարինել «3» թվով:

2. «Սպիտակի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն» մասում 3-րդ տողի «2» թիվը փոխարինել «3» թվով, իսկ «Ընդամենը» տողում«5» թիվը փոխարինել«6» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Invalid signature

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 27
ք.Վանաձոր